Լաբորատոր աշխատանք №4

Գոլորշիացման եղանակով աղաջրից կերակրի աղի անջատումը

Աշխատանքի նպատակը

Սովորել, թե նիչպես է անհրաժեշտ գոլորշիացման եղանակով լուծույթից անջատել լուծված նյութը:

Անհրաժեշտ նյութեր և սարքավորումներ

Սպիրտայրոց, կերակրի աղի լուծույթ, կալան և փորձանոթ:

Աշխատանքի ընթացքը

Աղաջրից կերակրի աղի անջատման համար նախ անհրաժեշտ է պատրաստել կերակրի աղի լուծույթ, ինչին դուք արդեն ծանոթ եք: Այդ լուծույթից աղն անջատելու համար անհրաժեշտ է լուծույթը լցնել հախճապակյա թասի մեջ և տաքացնել սպիր-տայրոցի վրա: Լուծույթը տաքացնելուց ջուրը կգոլորշեանա, իսկ թասիկի հատակին կնկատվեն կերակրի սպիտակ բյուրեղները: